ԱՅՍ ՏԱՐԻ ԿՏՈՆՎԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունները կազմակերպելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ստեղծվել է հանձնախումբ՝ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի ատենապետությամբ:

Օրերս Խաժակ Սրբազանի նախագահությամբ Մայր Աթոռում տեղի ունեցավ հանձնախմբի երկրորդ նիստը, որի ընթացքում հաստատվեցին տոնակատարությունների հիմնական ծրագիրն ու ժամանակացույցը: Ժողովականներն ընդգծեցին, որ Մայր Տաճարի 1700-ամյակի տոնակատարությունները մի նոր առիթ են հայ ժողովրդի հոգևոր վերածնության ու միության համար: Այս նպատակին են միտված նաև հոբելյանական հիմնական միջոցառումները՝ ուխտագնացություններ դեպի Ս. Էջմիածին, Հայաստանյայց Եկեղեցու բոլոր թեմերի և երիտասարդական միությունների ներկայացուցիչների հավաքներ և այլ ծրագրեր: Տարին կնշանավորվի նաև միջազգային գիտաժողովով և զանազան հրատարակություններով:

Հոբելյանական ողջ տարվա ընթացքում Հայոց Եկեղեցու բոլոր թեմերից կկազմակերպվեն առանձին ուխտագնացություններ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր ուխտավորների ամեն մի խումբ իր թեմակալ առաջնորդի հետ միասին կմասնակցի Ուխտի Պատարագի:

Հոկտեմբերի 30-ից միչև նոյեմբերի մեկը նախատեսվում է Հայ Եկեղեցու թեմական ներկայացուցիչների հավաք:

Եկեղեցասեր երիտասարդաց թեմական պատգամավորական առաջին համագումարը, որը նախատեսվում է հուլիսի առաջին տասնօրյակի ընթացքում, կազդարարի Հայ Եկեղեցու երիտասարդական ընդհանուր կենտրոնի ստեղծման մասին: Այդ օրերին կրկին նախատեսվում են ուխտագնացություններ Հայաստանի և Արցախի տարբեր սրբավայրեր՝ մասնակցությամբ Հայ Եկեղեցու բոլոր թեմերից ժամանած երիտասարդների:

Այս տարի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված հանդիսությունների շրջանակում կազմակերպվելու է նաև միաբանական համագումար, որը տեղի կունենա հուլիսի 23-27-ը Սևանի Վազգենյան դպրեվանքում: Համագումարին մասնակցելու է Մայր Աթոռի աշխարհասփյուռ ողջ միաբանությունը:

Հոբելյանի առիթով նախատեսվում են նաև մի շարք ալբոմների և գրքերի հրատարակություններ՝ նվիրված Ս. Էջմիածնին, Մայր Տաճարի պատմությանն ու խորհրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ